Եթե ինձ բախտ վիճակվեր ունենալ ևս մի տղա, ապա ես թույլ չէի տա դիպչել նրա սեռական օրգանին։

*Բժիշկ Բենջամին Սպոկ*

Այսօր շատ ծնողներ գիտակցում են որ եթե ճիշտ տեղեկություններ ստացած լինեին, ապա երբեք թույլ չէին տա որևէ մեկին թլփատել իրենց փոքրիկ տղային։

*Մարլին Միլոս, Բուժքույր*

Թլփատումը անդառնալի է Ես կոչ եմ անում ծնողներին ավելի խելիմիտ և պատասխանատու լինել որոշման մեջ։

*Բժիշկ Վիգեն Զարգարյան*

Թլփատումը ո՛չ բժշկական և ո՛չ էլ սոցիալական հարց է, այլ սեռական և մարդու իրավունքների խնդիր է։

*Ֆրեդերիկ Հոդջես, Բժշկական պատմաբան*

Երեխայի թլիփը ամբողջական թողնելու ամենակարևոր պատճառն այն է որ առանց կասկածանքի նա միանշանակ ուրախ կլինի այդ կապակցությամբ։

*Ջոն Էրիկսոն, ակտիվիստ*

Այն բոլոր սարսափները, որ բաժին է ընկել հայերին 20րդ դարում, հույս ունեմ որ թլփատումից գոնե վերծ մնան։

*Գերրի Հերրիման, ակտիվիստ*

Քրիստոնեական ավանդության տեսակետից ներքին հակասություն կա երբ մենք մկրտում և միևնույն ժամանակ թլփատում ենք մեր տղաներին։

*Աստղիկ Վարդանյան, Մարդաբան*

**Թլփատման դեմ պայքարող այլ կազմակերպություններ**

NOCIRC
Attorneys for the Rights of the Child (ARC)
Circumcision 911.
Circumcision Resource Center (CRC)
Doctors Opposing Circumcision (D.O.C.)
Equality Now
National Organization of Restoring Men (NORM)
National Organization to Halt the Abuse and Routine Mutilation of Males (NOHARMM)
Nurses for the Rights of the Child (NRC)
Students for Genital Integrity

# Հարցեր և Պատասխաններ Նորածինների Թլփատման Վերաբերյալ

---

**Հայ Երեխայի Բարօրության Ֆոնդ**

**Armenian Child Wellness Foundation**

**ACWF**

Ոչ-Շահութաբեր կրթական կազմակերպություն նվիրված երեխաների ֆիզիկական, մտավոր և հոգևոր բարօրությանը

**info@acwf.net**
**www.acwf.net**
**PO BOX 4663**
**Glendale, CA 91222**

## Ի՞ՆՉ Է ԹԼՓԱՏՈՒՄԸ

Թլփատումը առնանդամի գլխիկը ծածկող երկակի մաշկի վիրահատական հեռացումն է։ Այս երկակի մաշկը, որը ծածկում և պաշտպանում է գլխիկը, կոչվում է թլիփ։




## ԹԼԻՓԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՈՒՆԸ

Թլիփը կազմում է առնանդամի մաշկի կեսից ավելին և ունի գոնե երեք կարևոր նշանակություն. պաշտպանական, զգայական և սեռական։ Նորածին ժամանակ թլիփը կպած է գլխիկին և պաշտպանում է մեզից, կեխտից և ներքնազգեստի հարումներից։ Կյանքի ընթացքում, թլիփը խոնավ և փափուկ է պահում առնանդամի գլխիկը, ինչպես նաև պաշտպանում վնասվածքից։ Առանց այս պաշտպանության գլխիկը դառնում է արտաքին օրգան. մաշկը չորանում է, եղջերանում և տարիների ընթացքում կորցնում զգայնությունը։ Թլիփը նաև պարունակում է զգայական վերջույթներ, որոնք ավելացնում են սեռական հաճույքը։

*«Թլիփը պաշտպանում է գլխիկը ամբողջ կյանքի ընթացքում»* Ամերիկյան Մանկաբուժական Ակադեմիա

## ԹԼՓԱՏՄԱՆ ՍԿԻԶԲԸ ԱՄՆ-ՈՒՄ

Անգլիախոս երկրներում 1800-ականներին թլփատումը կիրառվել է որպես պատժամիջոց կանխելու երեխաների մաստուրբացիան (սեռական ինքնաբավարարումը)։ XX-րդ դարում թլփատումը կատարվում էր որպես այնպիսի հիվանդությունների կանխամիջոց, ինչպիսիք են առնանդամի, արգանդի պարանոցի քաղցկեղ և վեներական հիվանդություններ։ Այս ամենը մանրակրկիտորեն հերքված է։ Այսօր գիտությանը հայտնի է որ թլիփը նորմալ, զգայական և ֆունկցիոնալ մարմնի մաս է։

## ԹԼՓԱՏՈՒՄԸ ԱՐԴՅՈՔ ՑԱՎՈ՞Տ Է

Այո, այն ծայրահեղ ցավոտ և տրավմատիկ է երեխայի համար։ Հենց միայն կապված լինելը արդեն իսկ երեխայի համար սարսափելի է։ Հաճախ ընդունված խոսքը թե երեխաները ցավ չեն զգում ճիշտ չէ։ Երեխաները նույնքան զգայուն են ցավի նկատմամբ որքան մեծերը։ Երեխաների մեծ մասը թլփատման ժամանկ ծայրաստիճան բարձր ճչում են։ Որոշ երեխաներ կեխտոտում են, միուսները ընկնում են կոմայի մեջ և հաճախ դադարում լաց լինելուց։ Երեխայի լռությունը մեկնաբանվում է որպես ցավի բացակայություն, սակայն իրական պատճառն այն է որ նա շոկի մեջ է և ի վիճակի չէ լաց լինել։ Անզգայացնող միջոցները հաճախ չեն գործում և երեխաների մեծամասնությունը թլփատվում է առանց որևէ անզգայացման։

## ԹԼՓԱՏՈՒՄԸ ԱՐԴՅՈՔ ՎՏԱՆԳԱՎՈ՞Ր Է

Այո, ինչպես ցանկացած այլ վիրահատական գործողություն, թլփատումը վտանգներ ունի։ Դրանք են՝ երկարատև արնահոսություն, ինֆեկցիա, անզգայացման բարդություններ, վիրահատական սխալներ, այդ թվում գլխիկի կամ ամբողջ օրգանի կորուստ և հազվադեպ դեպքերում, նույնիսկ մահ։ Շատ թլփատված տղամարդիկ տառապում են հետևյալ պատճառներից՝ խորը սպիեր, սպիի պատռվածք և արնահոսություն, առնանդամի ծռվածք, ցավոտ էռեկցիաներ, իմպոտենցիա, անդամահատված լինելու զգացում, վիրավորանք, բարկություն։ Բոլոր թլփատված տղամարդիկ կորցնում են գլխիկի զգայնությունը տարբեր աստիճաններով, իսկ թլիփինը՝ ամբողջովին։ Թլփատումը կտրում-հեռացնում է սեռական օրգանի մոտավորապես 50% մաշկը։ Ըստ հետազոտությունների, տլիփի մաշկը ամենազգայունն է և բախկացած է հազարավոր ներվային վերջույթներից։ Այն զգայնությամբ նույնիսկ գերազանցում է գլխիկի մաշկին։ Թլիփի հեռացումով, գլխիկը անբնականորեն վերածվում է արտաքին օրգանի՝ մշտապես շփվելով ներքնազգեստին, չորանում է ու անզգայանում, ինչպես նաև ենթակա դառնում ամենատարբեր ֆիզիկական վնասվածքների։




## ԾՆՈՂՆԵՐԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այսորվա ծնողները՝ այդ թվում Հրեաներն ու Մուսուլմանները, հարցադրման են դնում թլփատումը. որքանո՞վ է խելամիտ երեխաներին ենթարկել ցավի և վտանգների։ Արդյո՞ք ծնողը իրավասու է որոշում ընդունել հեռացնելու երեխայի առողջ, նորմալ և ֆունկցիոնալ սեռական օրգանի մի մասը, այն դեպքում երբ մասնագետները այն համարում են բժշկականորեն հակացուցված մարմնահատություն։ Այսօրվա ծնողները, ավելի քան երբևէ տեղեկացված են թլփատման վտանգների մասին և իրենց երեխաներին թողնում են բնական։

## ՆՈՐՄԱԼ ՀԻԳԻԵՆԱ և ԽՆԱՄՔ

«Չթլփատված երեխայի խնամքը շատ հեշտ է, ամենաճիշտ խորհուրդն է այն հանգիստ թողնել» *(Ամերիկյան Մանկաբուժական Ակադեմիա)*։ Ընդամենը պահանջվում է արտաքին լվացում տաք ջրով։ Փոքրիկ բորբոքվածության և կարմրության դեպքում, որ երբեմն պատահում է քլորացված լողավազաններից, օճառներից, անտիբիոտիկներից և ջրազրկվածութիունից, խորհուրդ է տրվում շատ ջուր տալ, առանց օճառի տաք լոգանք անել և մի փոքր պահել առանց ներքնազգեստի։ «Երբեք ետ մի քաշեք նորածնի թլիփը, քանի որ այն համարյա միշտ ամուր կպած է գլխիկին։ Թլիփը ուժով ետ քաշելը վնասում է սեռական օրգանը և հնարավոր է հետևանք դառնալ սաստիկ ցավի, արնահոսության և կպումների։ Թլիփի բնական առանձնացումը գլխիկից կարող է տարիներ տևել *(Ամերիկյան Մանկաբուժական Ակադեմիա)*։ Միայն ինքը, երեխան կարող է թլիփը ետ քաշել։